ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔ
Անգլերեն
(առարկա)

Թեմա՝ **Սովորողներին խթանելու հնարներ**

Կազմեց՝ **Լուսինե Կարապետյան Սաշայի**
(անուն, ազգանուն, հայրանուն)

Օխտարի միջնակարգ դպրոց
(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ **Թագուհի Ղոնյան**

«Կապանի N 2 ավագ դպրոց»ՊՈԱԿ
(վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն..... 3

Գլուխ 1. Սովորողին խթանելու հնարների կարևորությունը օտար լեզուների՝ մասնավորապես անգլերենի դասավանդման ընթացքում..... 5

Գլուխ 2. Տարատեսակ հնարների կիրառության տարբերակներն ու դասակարգումը.....11

Գլուխ 3. Դասավանդման գործընթացում մեր կողմից օգտագործված հնարներն ու դրանց կիրառման արդյունավետությունը: Սեփական հետազոտություն.....17

Եզրակացություն 27

Օգտագործված գրականության ցանկ.....29

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայումս կրթական համակարգը հաճախ կենտրոնանում է երեխայի ճանաչողական զարգացման վրա՝ շեշտը դնելով բովանդակային գիտելիքների փոխանցման վրա, ինչը հաճախ տեղի է ունենում ստացած տեղեկատվությունն անգիր անելու և պարբերաբար կրկնելու միջոցով, և հաճախ մաթեմատիկայի, բնական գիտությունների, ընթերցանության, լեզուների դասերին ու դրանք ստուգող թեստերին են առաջնահերթությունը տրվում: Թեև դրանք հիմնարար են, սակայն ուսուցումը ներառում է շատ ավելին, քան պարզապես որոշ առարկաների մասին իներտ գիտելիքներ ձեռք բերելը:

Այսպիսի սահմանափակ մոտեցմամբ ուսուցումը պարփակում է այն շրջանակը, որտեղ երեխաները պետք է աճեն, գտեն ինքնազարգացման և ինքնաճանաչման իրենց ուղիները, զարգացնեն իրենց հմտությունները հարաբերությունների, ինքնության, հուզական փոխըմբռնման մեջ:

Ի վերջո աշակերտները բազմաբնույթ «ամբողջական» էակներ են, որոնց զարգացումը բարդ է ու բազմաշերտ: Այս դժվարին գործընթացում իրենց կարևորագույն տեղն ու ներդրումն ունեն, իհարկե, ուսուցիչներն ու այն հնարները, որոնք նրանք ընտրում և գործածում են դասի կազմակերպման ընթացքում՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխային՝ որպես անհատականությանը, գիտելիքների փոխանցման և ինքնաարտահայտման հնարավորությունները զարգացնելու հնարներն ու առանձնահատկությունները:

Չէ՞ որ սովորելը և՛սոցիալական, և՛ էմոցիոնալ, և՛ ակադեմիական գործընթաց է, և հանրակրթության գլխավոր նպատակը սովորողների մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացումն է: Այսինքն նրանց համար անհրաժեշտ գիտելիքների, կարողությունների և հմտությունների ձևավորում ու զարգացումը:

Ուստի այս հետազոտական աշխատանքը անդրադառնում է մի թեմայի, որն անշուշտ, շատ մեծ կարևորություն ունի կրթական գործընթացի արդյունավետ կազմակերպման գործում:

Հետազոտական աշխատանքի թեմայի արդիականությունը: Աշխարհում տեղի ունեցող փոփոխությունները պահանջում են մարդուց զարգացնել նոր մտածելակերպ, կարողություններ, հմտություններ: Այժմյան տեխնոլոգիական աշխարհում ավելի ու ավելի է բարդանում աշակերտներին ուսուցման գործընթացի

մեջ ներառելն ու հետաքրքրություն առաջացնելը: Ուստի շատ կարևոր է՝ ուսուցման ավանդական մեթոդներին զուգահեռ մշակել ու կիրառել նորարական հնարներ՝ սովորողին խթանելու գործում, ինչն էլ իր հերթին կբարձրացնի կրթական գործընթացի արդյունավետությունը:

Հետազոտության նպատակը: Առաջ քաշել և ցույց տալ սովորողներին խթանելու համար բազմապիսի հնարների օգտագործման գաղափարն ու կարևորությունը: Ինչպես նաև տարբեր տարիքային խմբերի աշակերտների համար մշակել ուսուցման համապատասխան հնարներ՝ կրթական մակարդակի արդյունավետության բարձրացման և աշակերտների մեջ ուսման հանդեպ հետաքրքրություն առաջացնելու գործում:

Հետազոտության խնդիրը: Հետազոտության խնդիրն է սահմանել սովորողներին խթանելու հնարների գաղափարը, խոսել դրանց առաջնահերթ կարևորության և կիրառման անհրաժեշտության մասին, ինչպես նաև առաջարկել սեփական տարբերակներն ու ուսումնասիրել դրանց կիրառման անրդյունավետությունը:

ՍՈՎՈՐՈՂԻՆ ԽԹԱՆԵԼՈՒ ՀՆԱՐՆԵՐ

Գլուխ 1. Սովորողին խթանելու հնարների կարևորությունը օտար լեզուների՝ մասնավորապես անգլերենի դասավանդման ընթացքում

Օտար լեզուների և մասնավորապես անգլերենի ուսուցումը հանրակրթության անհրաժեշտ բաղադրիչներից մեկն է: Դժվար է գերագնահատել օտար լեզուների ուսումնասիրության անհրաժեշտությունը և դրանց կիրառական նշանակությունը՝ որպես հաղորդակցման, ճանաչման, ինքնադրսևորման միջոց: Օտար լեզուների իմացությունը կարևոր է նաև առօրյա կյանքում, միջանձնային և միջմշակութային շփումների ընթացքում: Այս առումով առաջնային պայման է պատշաճ մակարդակով օտար լեզուների՝ հատկապես որպես միջազգայնորեն հաստատված լեզուների տիրապետումը: Տրամաբանական է, որ ներկայումս, աշխարհի քաղաքակիրթ երկրներում օտար լեզվի դասավանդումը դրված է շատ լուրջ հիմքերի վրա, և այժմ նույնիսկ ոչ թե երկլեզվությունը, այլ բազմալեզվությունն է կրթության համակարգում շրջանառվող առանցքային հասկացությունը: Եվ որպեսզի հնարավոր լինի հասնել իրական արդյունքների, այսինքն սովորողը ձեռք բերի կայուն գիտելիքներ, զարգացնի կարողություններն ու հմտությունները և կարողանա դրանք իրական կյանքում կիրառել պետք է հաշվի առնել տարբեր գործոններ:

Անգլերենի, ինչպես նաև մյուս օտար լեզուների դասավանդման գործընթացը հանրակրթական դպրոցում նպատակաուղղված է սովորողների մոտ հաղորդակցական կարողություններ զարգացնելուն բոլոր բաղադրիչներով լսել/ունկ նդրել, խոսել, կարդալ/ընթերցել, գրել: Միայն լեզվական գործունեության այս չորս տեսակների համադրությունն է, որ հնարավորություն է տալիս ստեղծել բնական լեզվական միջավայրի մոդել և շփման համար անհրաժեշտ պայմաններ[1]

Հայտնի է, որ օտար լեզուն, որպես ուսումնական առարկա, նպաստում է սովորողների ընդհանուր կրթությանը, զարգացնում նրանց ճանաչողական կարողությունները, խոսքն ու մտածողությունը, ուստի և օտար լեզվի դասավանդման ընթացքում կարելի է սովորողի մոտ զարգացնել մի շարք այլ լրացուցիչ կարողություններ: Սակայն, ինչպես գիտենք, ուսումնական գործընթացի արդյունավետությունը կախված չէ միայն շահառու մեկ կողմից: Միայն սովորողի կամ բացառապես ուսուցչի ջանքերով հնարավոր չէ հաջողել: Այս համատեքստում կարևոր կլինի ասել, որ դասավանդման մի շարք հնարների, զանազան գործիքների

[1]Գիտամեթոդական հանդես, Օտարլեզուները Հայաստանում, էջ 5 և 7:

կիրառումը ուսուցչին թույլ են տալիս կառավարելի դարձնել դասարանը: Եթե դասը հետաքրքիր է, ակտիվ , ապա սովորողը հաճույքով է մասնակցում դասին:

Մ. Դորշը տարբերակում է լեզվի ձեռքբերում և լեզվի սովորում հասկացությունները /acquisition and learning/: Նա կարծում է, որ լեզվի ձեռքբերումը չգիտակցված գործընթաց է, որի հիմքում անգիր արված բառերն ու արտահայտություններն են, լսողական և տեսողական ընկալումը, ինչպես մայրենի լեզվի դեպքում է: Լեզվի սովորումը ենթադրում է յուրաքանչյուր բառի, արտահայտության, մտքի և խոսքի գիտակցված սովորում, կառուցում և շարադրում /Dorsch, 2011: 2/:

Ուսուցման ոճերի վերաբերյալ շատ տարբեր մոտեցումներ և տեսություններ կան: Մարզանոն (1992[2]) առաջարկում է, որ ցածր ունակություններով աշակերտներին ուսուցանել «փակ» առաջադրանքների միջոցով: «Փակ» առաջադրանքն ունի հատուկ կառուցվածք և հրահանգների մի շարք՝ աշակերտներին հստակ պատկերացում տալու համար, թե ինչպես պետք է մոտենալ առաջադրանքին և կատարել այն: Այնուհետև, Մարզանոն առաջարկում է բարձր ունակություններ ունեցող աշակերտներին հանձնարարել «բաց» առաջադրանքներ՝ թույլ տալով աշակերտներին զարգացնել անալիտիկ մտածողությունը: Ուսուցման այս ոճը մեծապես կենտրոնացած է սովորողի վրա, և ուսուցիչը պետք է ընտրի դասավանդման ոճը՝ համապատասխանեցնելով դասարանի աշակերտների ունակություններին ու կարողություններին:

Ուսուցման ոճերի ամենաընդունված մոդելներից մեկը Ֆլեմինգի առաջարկած տեսողական-լսողական- կինեստետիկ (VAK) մոդելն է, որը հետագայում մշակվել է Գրինդերի կողմից: Տեսողական հնարի միջոցով սովորողները սովորում են՝ տարբեր տեսակի տեղեկատվությունները տեսնելու միջոցով, ինչպիսիք են նկարները, դիագրամները և այլն: Այս հնարի միջոցով սովորողները հաճախ հիշում են տեղեկատվությունը պատկերելով այն (Քեմինայս 2008[3]): Լսողական հնարի միջոցով սովորողները կարող են նախընտրել լսել տեղեկատվություն, օրինակ, պատմվածքի ընթերցման տեսքով: Նրանք կարող են նաև ավելի շատ օգուտ քաղել խմբակային քննարկումից, քանի որ հաճախ լսողական ունակություն միջոցով սովորողները հիշում են տեղեկատվությունը մտապահելով այն, ինչը լսել են (Քեմինայս 2008): Իսկ

[2] Marzano, R.J., 1992. A Different Kind of Classroom: Teaching with Dimensions of Learning. USA: Association for Supervision and Curriculum Development

[3] Cheminais, R., 2008. Every Child Matters: A Practical Guide for Teaching Assistants. New York: Routledge

կինէսթետիկ հնարի միջոցով սովորողները գերադասում են ֆիզիկապես ներգրաված լինել ուսուցման գործընթացի մեջ (Գրինդեր 1991[4]):

Ենթադրվում է, որ դասավանդման լավագույն ոճը բազմաֆունկցիոնալ մոտեցում օգտագործելն է: Սա կներկայացնի տեղեկատվությունն այնպես, որ իրենց լավագույնս համապատասխանեն: Պրոֆեսոր Էնթոնի Գրեգորկը առաջարկում է ուսուցման այլ մոտեցում: Նա բացատրում է, որ մարդիկ ընկալում և պահպանում են տեղեկատվությունը տարբեր ձևերով և Գրեգորկը մշակեց տեղեկատվությունը ընկալելու և պահպանելու տարբեր սանդղակներ:

Ուսուցիչների համար կարևոր է տարբեր առարկաներ դասավանդելիս օգտագործել դասավանդման մի շարք տարբեր ոճեր: Ուսուցիչները պետք է գտնեն դասի բովանդակությանը ամենահարմար ոճը, որը նաև կհամապատասխանի դասարանի բոլոր աշակերտներին և թույլ կտա օգուտ քաղել դասավանդումից:

Գարդներն առաջարկում է ուսուցման այլ տեսություն: Նա չի ընդունում այն մոտեցումը, որ մարդիկ խելացի են ծնվում, փոխարենը առաջ է քաշում տեսությունն այն մասին, որ բոլոր մարդիկ խելացի են բայց տարբեր ձևերով: 1983թ.-ին Գարդները մշակեց խելացի ինտելեկտի ութ տարբեր տեսակներ՝ լեզվական, տրամաբանական (մաթեմատիկական), տարածական, երաժշտական, կինոէսթետիկ, ներանձնային, միջանձնային և նատուրալիստական:

Պիաժեի ճանաչողական զարգացման մոդելը կոնստրուակտիվիստական է, ինչը նշանակում է, որ աշակերտները շարունակաբար հիմնվում են նախկին գիտելիքների վրա: Սա նաև կոչվում է սխեմա (Քարել 1984[5]): Աշակերտների սովորելու տարբերակներն ուսումնասիրելիս Պիաժեն կենտրոնացավ առնմանման (ասիմիլյացիա) և հարմարեցման վրա[6]:

Արդյունավետ դասավանդման համար ուսուցիչները պետք է օգտագործեն այնպիսի մոտեցումներ և տեսություններ, ինչպիսիք են Գարդների բազմակի ինտելեկտի տեսությունը, Պիագետի ճանաչողական զարգացման մոդելը, Գրինդերի VAK մոդելը և Գրեգորկի մոտեցումը: Հնարավոր չէ յուրաքանչյուր դաս պլանավորելիս հաշվի առնել ուսուցման բոլոր ոճերն ու հնարները:

[4]Grinder, M., 1991. Righting the Educational Conveyor Belt. USA: Metamorphous Press
[5]Carrell, P.L., 1984. Schema Theory and ESL Reading: Classroom Implications and Applications. The Modern Language Journal. 68 (4), pp.332-343
[6]Bybee, R.W., Sund, R.B., 1982. Piaget for Educators. 2nd ed. Columbus: Merrill Publishing Company

Այնուամենայնիվ, կարևոր է տարատեսակ ոճերի կիրառումը ուսուցման գործընթացում:

Արդյունավետ ուսուցում կազմակերպելու, կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ են որոշակի մեթոդներ, հնարներ և ձևեր: Մեթոդների ընտրությունը և կիրառությունն ինքնանպատակ լինել չի կարող: Այն կապված է բազմաթիվ խնդիրների և նպատակների հետ, որոնք իրական լուծում կարող են ստանալ միայն հատուկ պլանավորված և կազմակերպված ուսումնական գործընթացի միջոցով:

Ուսուցիչը միակ մարդն է, որը կարող է լսարանը կենսունակ դարձնել եռանդուն կերպով դասավանդելով: Ուսուցչի հիմնական նպատակը սովորողների հետաքրքրասիրությունը շարժելն ու դասավանդման գործընթացն արդյունավետ դարձնելն է: Այնուամենայնիվ, ինչպե ՞ ս պետք է ուսուցիչը կատարի իր առջև դրված այս դժվարին և պատասխանատու հանձնարարությունը: Որո՞նք են այն մարտավարությունները, որոնք ուսուցիչը պետք է կիրառի դասավանդելիս: Ինչպե՞ս պետք է հասնի բաղձալի արդյունքին: Այս բոլոր հարցերը ծագում են ուսուցչի մտքում դասավանդման ընթացքում: Սրանք են նաև այն հիմնական խոչընդոտները, որոնք ուսուցիչը պետք է հաղթահարի երեխաներին դասը ներկայացնելիս: Եթե դասի ներկայացումը արդյունավետ է, աշակերտները կարող են գիտելիքների ձեռքբերման միջոցով կյանքի կոչել իրենց կյանքի իրական նպատակները:

Ընդհանուր առմամբ, կարող ենք բացատրել դասավանդման ընթացքում կիրառվող հնարների դերը, որպես ընդհանուր դիզայն, թե ինչպես է դասը անցկացվելու կամ մատուցվելու ուսուցչի կողմից իր աշակերտներին: Դասավանդման գործընթացում հնարները կարող են նաև կոչվել այն կառուցվածքը, համակարգը, մեթոդները, տեխնիկան, ընթացակարգերը և գործընթացը, որն օգտագործում է ուսուցչը՝ աշակերտներին ուսուցանելու ընթացքում: Ուստի ուսուցողական ռազմավարությունը նպատակաուղղված և որոշված գործողությունների ծրագիր է:

Դասավանդման ընթացքում կիրառվող հնարների և ռազմավարությունների անհրաժեշտությունն ու կարևորությունը կարելի է քննարկել հետևյալ կերպ՝

- դասավանդման ընթացքում տարբեր հնարների ու ռազմավարությունների կիրառման կարևորագույն նպատակներից մեկն այն է, որ այն օգնում է դասարանում գրավել աշակերտների ուշադրությունը:

- դասավանդման ընթացքում տարատեսակ հնարների պատշաճ օգտագործումը շարժում է սովորողների հետաքրքրությունը և առաջացնում է ավելին իմանալու ցանկություն:
- հնարների օգտագործումը խթանում են սովորողներին հասկանալով սովորել նյութը՝ պարզապես այն անգիր անելով ժամանակավորապես հիշելու փոխարեն:
- հնարներն անհրաժեշտ են որպես երեխաների մոտ հետաքրքրությունների ստեղծման կամ պահպանման միջոց:
- դասավանդման հնարների ճիշտ կիրառումը հանգեցնում է երեխաներին դասավանդվող առարկայի առավել լավ մտապահելուն:
- հնարները ճիշտ օգտագործելով՝ ուսուցանողը փորձում է յուրաքանչյուր սովորողին ներգրավել մտքերի փոխանակման և դասի կազմակերպման գործընթացի մեջ:
- դրանք նպատակաուղղված են ապահովելու որոշակի բովանդակային նպատակների իրագործումը:

Ուսուցման հնարների ընտրությունը կախված է ուսուցչի գործունեության կազմակերպման բնույթից: Պայմանականորեն ուսուցման մեթոդներն այսօր երկու խումբ են կազմում՝ ավանդական և ժամանակակից մեթոդներ:

Դարեր շարունակ գործնականում դասավանդման միայն մեկ մեթոդ կար, երբ ուսուցիչը բացատրում էր դասը, և աշակերտները անգիր էին անում այն: Սա ավանդական մեթոդն է: Ավանդական են համարվում բացատրական, զննական այն մեթոդները, որոնց հիմքում ընկած է պատրաստի տեղեկատվության (գիտելիքի) պարզ փոխանցումը սովորողին և վերջինիս կողմից դրա պարզ վերարտադրումը: Այստեղ ուսուցիչը լիարժեք վերահսկողություն է իրականացնում իր աշակերտների նկատմամբ, և նրանց դասարանում ազատ գործելու ամենաքիչ հնարավորությունն է տրվում: Արդյունքում սովորողները շարունակում են չունենալ որոշումների կայացման և խնդիրների լուծման հմտություններ:

Մյուս կողմից, դասավանդման ժամանակակից մեթոդները ուսանողակենտրոն են և նվիրված են ավելի գործնական մոտեցումներին: Ժամանակակից մեթոդների հիմքում ընկած է սովորողի ինքնուրույն ուսումնական գործունեությունը, գիտելիքի ձեռքբերման գործընթացում նրա անմիջական, ակտիվ մասնակցությունը: Ուսուցման ընթացքում ակտիվ միջավայր ապահովող մեթոդներն ընդունված է անվանել

ինտերակտիվ կամ փոխներգործուն մեթոդներ: Այստեղ սովորողները պարզապես պասիվ ունկընդիրներ չեն: Նրանց հնարավորություն է տրվում ակտիվորեն մասնակցել դասակազմակերպման պրոցեսին[7]:

Այնուամենայնիվ, ինչպես ավանդական դասավանդման մեթոդները, այնպես էլ ժամանակակից դասավանդման մեթոդներն ունեն իրենց կարևորությունը և դրանցից որևէ մեկի օգտագործումը մեծապես կախված է սովորողներից և նրանց հետաքրքրություններից: Կիրառելով և՝ ավանդական, և՝ ժամանակակից դասավանդման մեթոդները ՝ ուսուցիչը կարող է ավելի լավ կազմակերպել տեղեկատվություն մատուցումն ու փոխանցումը: Միևնույն ժամանակ, նրանք կարող են օգտագործել տեսանյութեր կամ համակարգչային բազմաթիվ ծրագրեր գործնական հատվածն առավել արդյունավետ և գրավիչ կազմակերպելու համար: Չէ՞ որ մենք գործ ունենք նորագույն տեխնոլոգիաների ժամանակաշրջանում զարգացող սերնդի հետ:

Այսպիսով՝ ուսուցչի մասնագիտական կարողությունների կարևոր մասն են կազմում բազմազան մեթոդների իմացությունը, դրանք կիրառելու համադրելու հմտությունը: Ուսուցչի մեթոդական ձեռնհասությունը ուսուցման գործընթացի արդյունավետությունն ապահովող կարևոր ուղիներից մեկն է:

[7] https://aspu.am/website/images/old/upload/file/facultetner/kensab%20fac/ekologiayi_bnapahpanutyan_amb/Magistratura%20ekologia/11%20Mag.%20Cragir%20Dasavand.avand.ev%20jk-kic%20interakt.%20metod..pdf

Գլուխ 2. Տարատեսակ հնարների կիրառության տարբերակներն ու դասակարգումը

Լեզվի դասավանդման պատմության ընթացքում դասավանդողները կիրառել են տարբեր հնարներ, պարբերաբար անցում կատարել նորագույն հնարների կիրառությանը, իսկ ժամանակն ու նոր սերունդների պահանջները հղկել են բառապաշարի և լեզվական կանոնների մատուցման ձևերը՝ դրանք զուգադրելով ժամանակակից տեխնիկայի և սարքավորումների առաջարկած հնարավորությունների հետ: Նորովի մատուցելու և դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու ձգտումը լեզուն ուսուցանողներին դրդել է նոր սկզբունքներ և մարտավարություններ մշակելուն, որոնցից հաջողվածները լայն տարածում և կիրառություն են գտել, լրացվել, վերամշակվել և վերածվել մեթոդների կամ հնարների:

Սովորելու գործընթացը գրավիչ և հետաքրքիր դարձնելը կարող է երեխաների մոտ ուսման հանդեպ սեր ձևավորել ամբողջ կյանքի համար: Աշակերտներին ակտիվ և մոտիվացված պահելու համար պետք են կիրառել բազմաթիվ հնարներ: Եթե աշակերտները ուշադրությամբ չեն հետևում, և նրանց միտքը թափառում է, ապա նրանք չեն կլանում այն տեղեկատվությունը, որը մենք նրանց տալիս եք: Աշակերտներին դասավանդելու շատ տարբեր եղանակներ կան և եթե ցանկանում ենք, որ սովորողները իսկապես հետաքրքրեն դասով, այլ ոչ թե պարզապես անգիր անեն հանձնարարվող նյութը, ապա նրանց ուսուցանելու լավագույն միջոցներից մեկը ինտերակտիվ դասարանային գործունեությունն է: Ինտերակտիվ դասարանային գործունեությունը կարող է աշակերտներին թույլ տալ ավելի խորը հասկանալ, թե ինչ են նրանք սովորում, ավելի ինտեգրված լինել, ինչը կարող է դասարանային փորձառությունը ավելի հաջողված և արդյունավետ դարձնել:

Ահա, ես առաջարկում եմ դասավանդման մի քանի արդյունավետ հնարներ, որոնք ուսուցիչը կարող է կիրառել լսարանին շահագրգռված և ներգրավված պահելու, իսկ դասապրոցեսն ավելի արդյունավետ կազմակերպելու համար:

- ✓ *Դասը ներկայացնելիս օգտագործել իրական կյանքից բերված օրինակներ:*

Երբ մենք կապ ստեղծենք դասավանդման նյութի և իրական աշխարհի հետ, դա սովորողին ավելի մեծ պատկերացում կտա այն մասին, թե ինչու նա պետք է դա սովորի: Եթե աշակերտները անընդհատ հարցնում են, թե ինչու նրանք պետք է ինչ-որ բանը սովորեն, և մենք միշտ պատասխանում ենք «քանի որ դուք

պարտավոր եք», մենք կորցնում ենք աշակերտների վստահությունը և նրանք սկսում են չհետաքրքրվել, թե ինչ ենք մենք սովորեցնում իրենց: Փոխարենը նրանց պետք է իրական պատասխաններ տալ: Եթե նրանք սովորում են մաթեմատիկա և ցանկանում են իմանալ, թե երբ նրանք պետք է օգտագործեն այն, ասենք նրանց, որ նրանց պետք կգա մաթեմատիկան, երբ, ստուգեն չեկերը, վճարեն հաշիվները, մթերք գնեն, պարզեն, թե որքան կարժենա իրենց ուզածը և այլն: Սա կօգնի նրանց հասկանալու, թե ինչու նրանք պետք է սովորեն այն և՝ ինչ է նշանակում սովորել ապագայի համար:

✓ *Օգտագործել ժամանակակից տեխնոլոգիաներ:*

Նորարարական տեխնոլոգիաներով համալրված այս դարում օտար լեզվի դասավանդման խնդիրները նոր մարտահրավերներ են առաջադրում արդի ուսուցիչներին: Լեզվուսուցման ընթացքում կիրառվում են տեղեկատվական նոր տեխնոլոգիաներ, փորձ է արվում մշակելու դասավանդման նոր ձևեր, մեթոդներ, մոտեցումներ, հնարներ և այլն:

21-րդ դարում տեխնոլոգիան այն է, ինչով աշակերտները ապրում և շնչում են ամեն օր: Եթե մենք ցանկանում ենք տվյալ առարկայի դասը դարձնել ամենահետաքրքիրը, որին կցանկանան մասնակցել բոլորը և որին անհամբերությամբ կսպասեն, ապա պետք է ուսումնառության գործընթացի մեջ ներառենք ժամանակակից տեխնոլոգիաներն ու դրանց ընձեռնած բազմաթիվ հնարավորությունները ծառայեցնենք դասապրոցեսի կազմակերպմանը: Դասախոսելու և նշումներ անելու փոխարեն աշակերտները կարող են օգտվել խելացի գրատախտակից: Աշակերտները միասին մի նախագծի վրա աշխատելու փոխարեն, տեսաժողով են ունենում մեկ այլ երկրի կամ դպրոցի դասարանի հետ և աշխատում են նրանց հետ տվյալ նախագծի վրա: Օգտագործելով տեխնոլոգիաները դասարանում, աշակերտները կհետաքրքրվեն և կզբաղվեն նրանով, ինչը սովորում են: Տեխնոլոգիաները պետք է դարձնել դասի մի մասը: Կարելի է տեխնոլոգիան օգտագործել որպես գործիք՝ ուսուցումը ավելի զվարճալի, ծանոթ և հասանելի դարձնելու համար: Որպես պարզագույն և ամենահասանելի գործիքներ կարելի է օգտագործել Youtube-ը անհրաժեշտ թեմայով կարճ տեսանյութեր դիտելու և թեմային բազմակողմանիորեն ծանոթանալու համար: Յուրաքանչյուրը կարող է նույնիսկ ինքնուրույն ստեղծել համապատասխան նյութի վիզուալիզացիան՝ օգտագործելով Power Point ծրագիրը: Բացի այդ, տեխնոլոգիաների օգտագործումը կարող է աշակերտներին նախապատրաստել և զինել պահանջվող այն հմտություններով, որոնց կարիքը

նրանք կունենան, հետագա՝ մասնագիտական աշխարհի պահանջներին համապատասխանելու գործում:

- ✓ *Կազմակերպել դասարանային խաղեր, որպես դասավանդմանը խթանող միջոցներ:*

Կարևոր չէ՝ մենք գործ ունենք ութ, թե տասնութ տարեկանների խմբի հետ, բոլորը սիրում են խաղեր խաղալ: Շատ ժամանակ աշակերտները չեն էլ նկատում, թե ինչպես են սովորում, քանի որ նրանք չափազանց մեծ ոգևորվածությամբ են մտնում խաղի մեջ: Դասարանային խաղերի կազմակերպումը շատ ժամանակ և մեծ ռեսուրսներ չի պահանջում: Ցանկացած խաղ դասն ավելի հետաքրքիր կդարձնի, իսկ աշակերտնելին էլ ավելի զբաղված կպահի: Օրինակ եթե նրանք պետք է սովորեն բառապաշար և հիշեն բազմաթիվ կանոններ պետք է հիշողության խաղ խաղալ կամ գալիք ստուգողական աշխատանքներին պատրաստվելու և աշակերտների գիտելիքները ստուգելու համար համար կազմակերպել խաղ – շոու: Սա ոչ միայն խաղ - շոու է, որն ավելի ինտերակտիվ է դարձնում դասը ամբողջ դասարանի համար, այլ նաև շատ ավելի զվարճալի ու հետաքրքիր է, և երբ ուսուցումը զվարճալի է, աշակերտներն ավելի հաճույքով են սովորում:

- ✓ *Սովորողներին ընտրության հնարավորություն տալ:*

Աշակերտները ուրախ և ոգևորված կլինեն, երբ հնարավորություն ստանան ընտրելու, թե ինչ և ինչպես են սովորելու: Պետք է աշակերտներին ընտրության հնարավորություն տալ: Երբեմն նրանց ընդհամենն անրաժեշտ է ինքնարտահայտվելու հնարավորություն ունենալ: Երբ երեխաները ընտրելու հնարավորություն ունեն, դա նրանց օգնում է ավելի շատ ներգրավվել և հասկանալ, թե ինչ է իրենից պահանջվում: Մենք պետք է փորձենք թույլ տալ, որ նրանք ընտրեն, թե մեր տված դասի կամ տնային հանձնարարության հետ միասին, ինչ աշխատանքներ նրանք պետք է կատարեն տվյալ թեմայի վերաբերյալ: Երեխաներին ընտրության հնարավորություն տալը դասերն ավելի արդյունավետ կդարձնեն, միաժամանակ աշակերտների մոտ կձևավորեն ստեղծագործ մտածողություն և կզարգացնեն որոշումների կայացման հմտությունները:

- ✓ *Օգտագործել տարատեսակ վիզուալներ:*

Իհարկե, ավելորդ է ասելը, որ մեկ նկարը հազար բառ արժե նկարագրության տեսանկյունից: Անկախ նրանից, թե որքան ենք նկարագրում՝ ինչ տեսք կունենա ծաղիկը բառերի միջոցով, այն ազդեցությունը, որը ստեղծում է նկարը, շատ ավելի մեծ է, քան բառերի միջոցով ստեղծվածը: Դասավանդելիս և սովորելիս

պետք է հիշել երկակի կոդավորման այս գաղափարը: Ե՛վ վիզուալների, և՛ տեքստի օգտագործումը սովորելու ընթացքում շատ կարևոր են՝ թեմայի ամբողջական ընկալման համար:

✓ *Փորձել դեմ և կողմ մոտեցումները*

Աշակերտները կարող են իրենց վերաբերմունքն արտահայտել այն ամենի մասին, ինչը սովորում են: Բայց ոչ մի խնդիր միակողմանի չէ, և բանավեճի այս վարժությունը կարող է օգնել սովորողներին տեսնել բարդ խնդրի երկու կողմերը: Մենք հանձնարարում եք մի խումբ աշակերտների խոսել որոշակի հարցի օգտին, իսկ մյուս խմբին՝ տվյալ հարցին դեմ, որին կհաջորդի դաս-քննարկում: Այս վարժությունը ոչ միայն ամբողջ դասարանը ներգրավվում է քննարկմանը, այլև ցույց է տալիս, որ մի քանի հարցեր խիստ սև ու սպիտակ են, դաս, որը չափազանց օգտակար կլինի նրանց համար ինչպես դասարանում, այնպես էլ դասարանից դուրս:

✓ *Թույլ տալ աշակերտներին կազմակերպել և ղեկավարել դասերը:*

«Ո՞րն է ուսուցման ամենից արդյունավետ մեթոդը» հարցի լավագույն պատասխանն այն է, որ դա կախված է նպատակից, աշակերտից, ուսուցանվող նյութի բովանդակությունից և ուսուցչից: Հաջորդ լավագույն պատասխանն է «երբ աշակերտներն իրենք ուսուցանում են այլ աշակերտների»: Ուլբերթ Ձ. Մըքքիչի

Երբեմն-երբեմն աշակերտներին թույլ տալով անցկացնել դասերը՝ մենք, դասերն ավելի ինտերակտիվ և մոտիվացնող դարձնելու հիանալի միջավայր ենք ստեղծում: Բացի այդ, դասավանդելու հնարավորություն ստանալով աշակերտը սկսում է ավելի խորությամբ ուսումնասիրել իրեն հանձնարարված նյութը, ինչն էլ ավելի կբարելավի ուսման գործընթացը:

✓ *Նկարել դասի բովանդակությունը:*

Եթե ցանկանում ենք համոզվել, որ սովորողներն իսկապես հասկանում են դասավանդվող նյութը, պետք է նրանց խնդրել ընդհամենը նկարել այն: Աշակերտներին, դասի բովանդակությունը նկարելու հնարավորություն տալով, կհամոզվենք, որ նրանք սկսում են իսկապես հասկանալ՝ ինչի մասին են սովորում, ինչն էլ դասն ավելի գրավիչ և ինտերակտիվ է դարձնում:

✓ *Գնալ թեմատիկ էքսկուրսիաների:*

Աշակերտներին էքսկուրսիայի տանելը ուսուցման ինտերակտիվ դարձնելու լավագույն միջոցներից է, քանի որ այն շունչ է տալիս դասին: Պետք է դասը դասարանից դուրս բերել: Օրինակ կառավարման համակարգի մասին դասավանդելիս, կարելի է կազմակերպել թեմատիկ ուղևորություն դեպի քաղաքապետարան, որպեսզի նրանք կարողանան տեսնել տեղական

ինքնակառավարման մարմինները: Իսկ եթե հաջորդ թեման առնչվում է կենդանիներին, կազմակերպել այցելություն դեպի կենդանաբանական այգի, որպեսզի նրանք անձամբ տեսնեն այդ կենդանիներին, և այդ դեպքում ավելի տպավորիչ և արդյունավետ կլինի դասի կազմակերպումը, իսկ աշակերտները երբեք չեն մոռանա այն նյութը, որը սովորել են հաճույքով ու հետաքրքրությամբ:

✓ *Դասաժամը բաժանել մի քանի մասերի*

Շատ հաճախ դասերը կազմակերպվում են դասախոսությունների միջոցով, հատկապես եթե մենք բացատրում ենք նոր թեմա: Բայց մենք չենք կարող ակնկալել դասերի բարձր արդյունավետություն, եթե ստիպենք երեխաներին նստել և շարունակաբար լսել մեզ: Դրա համար անհրաժեշտ է դասը մասերի բաժանել, այնպիսի միջոցներ ձեռք առնել, որոնք կգրավեն երեխայի ուշադրությունն ու կշարժեն նրա հետաքրքրասիրությունը: Օրինակ բացատրել դասը, անցում կատարել վարժություններին, ապա վերադառնալ դասի տեսական հատվածը շարունակելուն, կամ պարզապես թույլ տալ աշակերտներին վեր կենալ տեղերից և ֆիզիկական թեթև վարժություններ կատարել մի քանի վայրկյան: Նույնիսկ երեսուն վայրկյան տևող ընդմիջումները հրաշքներ կգործեն: Եվ, իհարկե, դասն ավարտել քննարկումով: Միևնույն ժամանակ պետք է փորձենք տարբերել միջոցներ ձեռք առնել յուրաքանչյուր դասի համար և ուշադրություն դարձնենք նրան, թե ինչպես ենք ամեն օրվա դասը կազմակերպում: Նոր ձևերով սովորելը էլ ավելի կխթանեն աշակերտներին:

✓ *Բաց լինել ստեղծագործելու և նոր գաղափարների համար:*

Իհարկե ավելի հեշտ է ամեն տարի դասի միևնույն խորագրով աաջնորդվելով դասն անցկացնելը, քանի որ, եթե կա փորձված որևէ միջոց, որն անդյունավետ կերպով աշխատում է, մենք հաճախ վախենում ենք նոր հնարներ կիրառելուց: Բայց պետք է հիշել, որ ամեն նոր ուսումնական տարին իր հետ բերում է նոր աշակերտներ՝ նոր նախասիրություններով և հետաքրքրություններով: Բազմազանությունը և ստեղծարարությունը լավագույն միջոցներն են, որպեսզի ուսուցումը հաճելի դառնա: Ըստ էության, մենք պետք է բաց լինենք նոր գաղափարների և ստեղծարարության համար: Դասի ընթացքում տրվող հանձնարարություններն ու նախագծերը փոփոխելու հնարավորություն տալով՝ կտեսնենք, որ աշակերտների գաղափարները լսելն ու օգտագործելը, դասի յուրահատուկ շրջաադարձ են տալիս: Բացի այդ, երբ աշակերտներն ինքնուրույն են ինչ - որ բան անում, դա նրանց համար ավելի իմաստալից է դառնում, և նրանք վստահություն են ձեռք բերում իրենց որոշումների կայացման հարցում: Խոսելու հնարավորությունն աշակերտներին տալը, կարող է նրանց օգնել ավելի լավ

կենտրոնանալ դասի վրա, նաև զարգացնել հանրության առջև խոսելու հմտությունը, որը նրանց ավելի ինքնավստահ կդարձնի:

Այստեղ մենք քննարկել ենք ուսուցման և սովորողներին խթանելու մի քանի արդյունավետ հնարներ: Կարևոր է նշել, որ տարբեր ուսումնառուներ տարբեր կերպ են սովորում: Չնայած դիտարկված այս հնարներն իսկապես արդյունավետ են, դրանք չեն կարող աշխատել բոլորի համար նույն օգտակարությամբ և արագությամբ: Որպես ուսուցիչներ, մենք պետք է դասարանում տարատեսակ հնարներ օգտագործենք և աշակերտներին էլ աջակցենք նոր և ստեղծագործ միջոցներ փորձարկելու գործում: Կարևոր է գիտակցել, որ սովորելու պատրաստակամությունն ամենակարևորն է:

Այսպիսով՝ սովորողի կողմից լեզուն առավել արդյունավետ յուրացնելու ոճով է պայմանավորված հնարների ընտրությունը: Ոմանք ավելի լավ են ըմբռնում նյութի հետ շատ և պարբերաբար աշխատելու դեպքում և նախընտրում են «ուսանողակենտրոն» ոճով աշխատել՝ իրենց վրա վերցնելով նյութի հետ աշխատելու ծանրությունը, ոմանք էլ նյութը հեշտությամբ մտապահում են՝ տեսողական հիշողությամբ «որսալով լեզվական նշաններն ու պատկերները» և դասավանդողից պահանջում են տրամադրել միայն մշակված նյութեր: Ոճերին համարժեք հնար ընտրելիս կարևոր է նաև դասընթացի տեղայնությունը: Հարկ է նաև նշել, որ մեկից ավելի սովորողների հետ աշխատելիս հաճախ անհրաժեշտություն է առաջանում մեկ դասաժամի ընթացքում անցում կատարել տարբեր ոճերի, այսինքն՝ աշխատել դասավանդման տարբեր հնարների համակցմամբ:

Գլուխ 3. Դասավանդման գործընթացում մեր կողմից օգտագործված հնարներն ու դրանց կիրառման արդյունավետությունը: Սեփական հետազոտություն

Արդյունավետ ուսուցման կարևորագույն գործընթացներից մեկը ուսումնառուների ներգրավվածության և գիտելիքների ներդաշնակության ապահովումն է: Այս համատեքստում վերջին տասնամյակում հատկապես կարևորություն են ստացել արդյունավետ ուսուցման ապահովումը, աշակերտների սովորելու ցանկությունը խթանելու համար տարատեսակ հնարների օգտագործման՝ այդ թվում նորագույն տեխնոլոգիաների միջոցով:

Հետազոտության շրջանակներում ես՝ իմ, ուսումնասիրությունն անց եմ կացրել երրորդ և իններորդ դասարաններում:

Ես ընտրել եմ մասնավորապես երրորդ դասարանն այն պատճառով, քանի որ կարծում եմ՝ շատ կարևոր է աշակերտի մոտ լեզվի հանդեպ փորձել հետաքրքրություն առաջացնել և սեր սերմանել առարկայի ուսումնառության ամենասկզբից: Ուստի, քանի որ գործ ունենք փոքր երեխաների հետ, շատ կարևոր է նրանց ուշադրությունը գրավել դասի ամենասկզբից, օրինակ խաղի վերածելով ծանոթության գործընթացը:

Մենք մեր դասը սկսոցինք թղթե ինքնաթիռներ նետելու խաղով: Խաղի էությունը հետևյալն է. դասարանի յուրաքանչյուր աշակերտ պատրաստում է թղթե ինքնաթիռ, գրում՝ իր անունը դրա վրա, և բոլորով նետում են իրենց ինքնաթիռները: Ամեն աշակերտ վերցնում է մեկ ինքնաթիռ, կարդում՝ գրված անունը, գտնում՝ տվյալ աշակերտին և ներկայացնում նրան: Ապա, աշակերտներից ամեն մեկի հետ ավելի լավ ծանոթանալու համար մենք խաղացինք փուչիկներով խաղ: Դրա համար հարկավոր է աշակերտներին կանգնեցնել շրջանաձև և տալ մեկ փուչիկ: Ամեն աշակերտ, իր ամբողջ ծանրությամբ, պետք է նստի փուչիկի վրա երեք վայրկյան, ապա այն փոխանցի մյուսին: Ում մոտ գտնվելու ընթացքում որ փուչիկը պայթի, նա պետք է իր մասին երեք հետաքրքիր փաստ հայտնի:

Ծանոթացման դասի արդյունքները ավելի քան դրական էին: Երեխաները ծանոթացան միմյանց և ուսուցչի հետ, ավելի մտերմացան, ոգևորվեցին, լիցքաթափվեցին, ոգեշնչվեցին և սկսեցին առավել դրական տրամադրվածությամբ սպասել մյուս դասերին:

Ես կարծում եմ, որ հատկապես տարրական դասարանների աշակերտներին դասավանդման գործում շատ մեծ կարևորություն ունի խաղերի կազմակերպումը: Չէ՞որ, գործ ունենք ընդհամենը երրորդ դասարանի աշակերտների հետ, և նրանց մոտիվացնելու ավելի լավ միջոց, քան խաղն է, դժվար է պատկերացնել:

Հաջորդ կարևորագույն հնարը, որ փորձեցինք կիրառել հետազոտության ընթացքում, վեր կենալ ու շարժվելու գաղափարը դասի մեջ մտցնելն է: Տարրական դասարանի աշակերտները չեն սիրում երկար նստած մնալ, նրանք արժանի են փոքրիկ ընդմիջման: Երբեմն նկատում ենք, որ սովորողները հետ են մնում կամ չեն կարողանում կենտրոնանալ, այդ դեպքում պետք է փոքրիկ ընդմիջում տալ կամ դասի մեջ շարժումներ մտցնել: Ես գտել եմ հաճելին օգտակարի հետ համատեղելու հետևյալ տարբերակները, որոնք խրախուսում և դրդում են աշակերտին տեղաշարժվել՝ միևնույն ժամանակ սովորելով:

1. Լուռ քննարկման տախտակներ. Տեղադրել պաստառային թղթեր դասասենյակում, որոնց վրա գրված են հարցեր: Աշակերտները կարող են շրջել սենյակով և գրել իրենց պատասխանները թղթի վրա՝ նախքան հաջորդ հարցին անցնելը:
2. Քայլել և խոսել. այս մեթոդը համատեղում է խմբային աշխատանքն ու շարժումը՝ քննարկման համար գրավիչ միջավայր ստեղծելու համար: Աշակերտները համագործակցում են և քննարկում թեման՝ միասին շարժվելով դասարանում:
3. Կայաններ. սենյակը բաժանել մի քանի խմբերի՝ հիմնվելով թեմայի հետ կապված տարբեր առաջադրանքների կամ հարցերի վրա: Մի քանի րոպեն մեկ աշակերտները կպտտվեն հաջորդ կայարան և կսկսեն հաջորդ առաջադրանքը: Այս մեթոդը նրանց ներգրավված է պահում և թույլ է տալիս նրանց վերլուծել թեման բազմաթիվ տեսանկյուններից: Միևնույն ժամանակ հարկավոր է ապահովել, շարժման միջոցով և ընթացքում սովորելու հնարավորություն ընձեռնող աշխատանքների բազմազանությունը: Եթե Աշակերտերն իմանան, որ առջևում փոքրիկ ընդմիջում կա, նրանք առավել մեծ ոգևորվածությամբ կսովորեն և մոտիվացված կմնան ամբողջ դասի ընթացքում:

Օգտվելով եղանակային բարենպաստ պայմաններից, ես որոշեցի հետազոտության շրջանակներում ուսումնասիրել ևս մեկ հնար: Այն է, Սովորում ենք դրսում զվարճանալով: Սա, դասը արդյունավետ կերպով ընդմիջելու, ևս մեկ հնարավորություն է: Կա՞ որևէ բառ, որն ավելի շատ ուրախություն է պատճառում աշակերտներին, քան ընդմիջումը: Այս բացօթյա ընդմիջումներին անհամբեր սպասելը կարող է դասաժամերը դարձնել ավելի զվարճալի և գրավիչ: Երեխաները

դադարի կարիք ունեն, սակայն շատ դպրոցներ և ուսուցիչներ չեն փորձում դադարն օգտագործել ակադեմիական տեսանկյունից: Այնուամենայնիվ, հետազոտությունները ցույց են տալիս, որ բակ դուրս գալը, խաղահրապարակում խաղալը և ընկերների հետ շփումը խթանում են աշակերտների ուղեղը սովորելու համար: Դրա հետ մեկտեղ մենք և մեր աշակերտները կարող ենք վայելել դրսում դասեր անցկացնելու հետևյալ լրացուցիչ առավելությունները.

1. Սովորել տարբեր առարկաների մասին. Իհարկե, բացօթյա դասերը կարող են իդեալական լինել բնագիտության դասերի համար, սակայն մենք նույնպես կարող ենք այս հնարավորությունն օգտագործել ի շահ մեր առարկայի, օրինակ դրսում անցկացնել դասի ընթերցանության հատվածը կամ սովորել բազմաթիվ առարկաներին և բույսերին վերաբերվող բառապաշար՝ պրակտիկ կերպով դրանք ուսումնասիրելու ու դիպչելու միջոցով:
2. Գնահատականների բարելավում. դրսում դասեր անցկացնելը կարող է բարձրացնել գնահատականները: Երեխաները կարող են ավելի ներգրավված լինել ուսուցման մեջ և զարգացնել իրենց քննադատական մտածողության հմտությունները՝ մեծացնելով թեստերն ու առաջադրանքները լավ կատարելու իրենց հնարավորությունները:
3. Սթրեսի նվազեցում. Ինչպես աշակերտները, այնպես էլ ուսուցիչը արժանի են հանգստանալու հնարավորություն ունենալուն՝ գրքերից, թեստերից և դասախոսություններից դուրս՝ որոշ ժամանակ անցկացնելու և բոլորի սթրեսը նվազեցնելու համար:

Եվ վերջապես, կարծում եմ, որ ուսումնառության ընթացքում ընդհանրապես և, մասնավորապես տարրական դասարաններում, չափազանց կարևոր է ուսումնական գործընթացի հանդեպ ընտանեկան նախատրամադրվածությունը, ծնողների դերն ու ներգրավվածությունը: Սակայն այժմ մանրամասն չենք անդրադառնա այս հարցի քննարկմանը, քանզի այն անմիջականորեն իմ ուսումնասիրության առարկան չէ և իմ թեմայի շրջանակներում նման հետազոտություն կատարելը չափազանց ծավալում կլինի:

Ինչ վերաբերվում է իններորդ դասարանում անցկացրած իմ հետազոտությանը, կարող եմ ասել, որ մենք փորձեցինք այստեղ կիրառել փոքր-ինչ այլ մոտեցում: Թեև կրկին գործ ունենք երեխաների հետ, սակայն պետք են հաշվի առնել տարիքային և անհատականության ձևավորման հետ կապված առանձնահատկությունները: Ուստի, կարծում եմ, որ զարգացման և անձի

ինքնահաստատման այս փուլում գտնվող աշակերտների հետ բավականին արդյունավետ կերպով է աշխատել քննարկման հնարի կիրառությունը:

Աշակերտները շատ են ոգեշնչվում, երբ զգում են, որ ուսուցիչը լսում, կարևորում ու ընդունում է իրենց տեսակետը և փորձում՝ համագործակցության գնալ սովորողների հետ՝ կարևորելով նրանց կարծիքն ու հաշվի առնելով նրանց հետաքրքրությունների շրջանակը:

Ես փորձեցի քննարկման հնարը կիրառել դասի թեմային առնչվող տեսանյութերի, հոլովակների կամ պատմությունների՝ բոլորին հայտնի կերպով քննարկում կազմակերպելու և տեսակետեր փոխանակելու միջոցով, որոնց արդյունավետության մասին բազմիցս խոսվել է: Սակայն, հարկ եմ համարում նշել, որ ես՝ իմ հետազոտության ընթացքում քննարկման միջոցով կազմակերպեցինք հետաքրքիր բանավեճեր՝ օգտագործելով հետևյալ տարբերակները.

1. Դասարանին եմ ներկայացնում թեմային առնչվող արևէ փաստարկ կամ հայտարարություն, որն ունի քննարկման երկու համարժեք կերպով հակադիր կողմեր՝ «համաձայն եմ, համաձայն չեմ»: Կախված նրանից, թե դասարանի աշակերտներից որոնք են կողմ կամ դեմ ներկայացված պնդմանը, նրանք բաժանվում են երկու խմբերի, տեղավորվում՝ դասարանի տարբեր մասերում և փորձում՝ պաշտպանել իրենց տեսակետերն ու ապացուցել իրենց ճշմարտացիությունը: Տվյալ կերպով կազմակերպվող բանավեճերը կարող են լինել ինչպես հանպատրաստից, այնպես էլ նախօրոք համաձայնեցված և կազմակերպված: Երկրորդ տարբերակի դեպքում աշակերտները նախօրոք ծանոթանում են թեմային առնչվող նյութերին և տեքստերին, իսկ բուն բանավեճի ընթացքում փորձում են հաստատել իրենց պնդումները՝ վկայակոչելով տեքստային ապացույցներին:
2. Քննարկման հիման վրա կազմակերպված հաջորդ բանավեճի էությունն այն է, որ ես աշակերտներին եմ ներկայացնում որևէ թեմային վերաբերվող բավականին ընդգրկուն մի հարց, որը կհանգեցնի բազմաթիվ տարբեր գաղափարների և պատասխանների առաջացմանը; Օրինակ՝ «ինրու՞ է կարևոր օտար լեզուների ուսուցումը» կամ «պատերազմի թողած հետքերն ու հետևանքները» կամ «ինչ գրական գործեր պետք է կարդա յուրաքանչյուր մարդ»: Ապա հանձնարարում եմ աշակերտներին գրի առնել իրենց պատասխանները թղթերի առանձին կտորների վրա, և դրանք փակցնել գրատախտակին՝ առանց հատուկ դասավորության: Երբ բավականին շատ

թերթիկներ հավաքվեցին, ես խնդրեցի աշակերտներին խմբավորել դրանք ըստ կատեգորիաների, անվանումներ տալ կատեգորիաներին և քննարկել, թե ինչու են տվյալ գաղափարները տեղադրվում դրանց մեջ, ինչպես և ինչով են կատեգորիաները փոխկապակցված և այլն:

Հարկ է նշել, որ այսպիսի քննարկումների և բանավեճերի կազմակերպումը ոչ միայն օգնում են աշակերտներին ավելի լավ ըմբռնել հանձնարարվող կամ արդեն հանձնարարված նյութը, այլև մարզում են միտքը, խթանում են աշակերտների խոսքի, սեփական տեսակետերն արտահայտելու և պաշտպանելու ունակությունների զարգացմանը, ինչպես նաև խմբի ներսում՝ այլ աշակերտների հետ, համագործակցելու, փոխզիջումների գնալու, համատեղ աշխատանք կատարելու, ինքնակազմակերպվելու ունակությունների ձևավորմանը:

Քննարկման հնարի վրա հիմնված մեկ այլ միջոց է մտագրոհը, որը նույնպես ես օգտագործեցի դասերի կազմակերպման գործընթացում:

Դասի մասնակցային սկիզբ ապահովող լավագույն մեթոդներից մեկը մտագրոհն է: Մտագրոհի միջոցով ուսուցիչը դասարանից հավաքում է մտքեր տվյալ թեմայի վերաբերյալ: Ընդ որում՝ մտագրոհի ժամանակ կարևոր է մտքերի քանակը: Կարևոր է նաև, որ աշակերտները առանց երկար մտածելու պատասխանեն ուսուցչի հարցին, որպեսզի ուսուցչի համար պարզ դառնան նաև այն սխալ պատկերացումները, որոնք թեմայի վերաբերյալ ունեն աշակերտները: Վերջին տարիներին մասնագետները մտահոգություն են հայտնել մտագրոհի հետ կապված: Բանն այն է, որ դասերի ժամանակ ակտիվ աշակերտները մենաշնորհում են մտագրոհը: Դանդաղ մտածող, ոչ ակտիվ աշակերտները կարող են դուրս մնալ մտագրոհից: Դրա համար առաջարկվում է օգտագործել նաև մտագրոհի գրավոր տարբերակը: Ուսուցիչն աշակերտներին առաջարկում է թղթի վրա գրել իրենց մտքերը և հանձնել իրեն: Այս մոտեցումը չի փոխարինում բանավոր մտագրոհին: Պարզապես լրացնում է այն[8]:

Դասն արդյունավետ կերպով կազմակերպելու գործում ես կարևորում եմ ոչ միայն գիտելիքի փոխանցմանն ուղղված հնարների կիրառությունը, այլև փորձում եմ նպաստավոր միջավայր ստեղծել երեխաների՝ ստեղծագործ մտածողության, զարգացման համար: Օրինակ, դասերի շրջանակներում, ես հաճախ եմ աշակերտներին իմպրովիզացիաներ անելու հնարավորություն տալիս: Իմպրովիզացիոն վարժություններն իրականում շատ արդյունավետ են: Դրանք

[8] https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf

երեխային թույլ են տալիս մտածել, երևակայել, դուրս գալ կաղապարային մտածելակերպի շրջանակներից և ամբողջությամբ ներգրավվել ուսուցման գործընթացի մեջ:

Եվ վերջապես, ես ցանկանում եմ խոսել ևս մեկ հնարի մասին, որը կիրառել եմ իմ հետազոտության շրջանակներում: Այն է՝ խմբային աշխատանքը: Թեև այս հնարի մասին վաղուց է հայտնի և շատ է խոսվել, ես նույնպես փորձեցի համոզվել դրա արդյունավետության մեջ՝ կիրառելով այն:

Երբ աշակերտներին թույլ ենք տալիս միասին աշխատել, նրանք ավելի արագ են սովորում և ավելի երկար՝ հիշում նոր տեղեկատվությունը: Համագործակցությունը նաև օգնում է զարգացնել քննադատական մտածողությունն ու հաղորդակցման հմտությունները: Խմբային աշխատանքի ժամանակ փոխվում է դասարանային միևնույն առօրյան՝ ուսուցումն ու դասը դարձնելով ավելի հաճելի:

Խմբային աշխատանք հանձնարարելիս ես առաջնորդվում եմ մի քանի կանոններով.

- Կարճ ժամանակ տրամադրել: Խմբային աշխատանքի ժամանակ ես հատկացնում եմ 5-10 րոպե, որի օգնությամբ աշակերտներն անմիջապես կենտրոնանում են այն առաջադրանքի վրա, որը պետք է կատարեն: Երբ ժամանակը սպառվում է, ես հանձնարարում եմ խմբին ներկայացնել իրենց պատրաստած առաջարկներն ու պատասխանել հարցերին:
- Դերերի բաշխում: Խմբի ներսում յուրաքանչյուր աշակերտին տրվում է որևէ կոնկրետ դեր-պարտականություն: Այդ դեպքում աշակերտներն իմանում են ինչից սկսել և կոնկրետ ինչի վրա կենտրոնանալ:
- Եվ ես առաջարկում եմ, քննարկումն ավելի հեշտ սկսելու համար աշակերտներին տրամադրել, թեմային առնչվող, նախադասությունների սկզբնամասեր, որոնք քննարկումն անմիջապես սկսելու համար հարմար հիմք կհանդիսանան: Օրինակ, մենք խմբային աշխատանքներից մեկի ժամանակ փորձեցինք առաջարկվող հետևյալ կաղապարային սկզբնակառույցները.
    - Ես այսօր սովորեցի.....
    - Ինձ զարմացրեց .....
    - Այսօրվա դասի ամենաօգտակար բանը .....
    - Ինձ հետաքրքրեց .....
    - Այս դասի ժամանակ ինձ ամենաշատը դուր եկավ .....

- Մի բան, որ չհասկացա .....
- Մի բան, որ կուզեի ավելին իմանալ .....
- Այս դասից հետո ես զգում եմ .....
- Այս դասից ավելին կսովորեի եթե ....

Պատկերում բերված կիսատ նախադասությունների լրացումն օգնում է աշակերտներին ամփոփել դասը[9]:

Հարկ եմ համարում նշել նաև, որ մեր առաջին դասը մենք սկսեցինք քննարկման միջոցով: Նախ և առաջ կազմակերպեցինք մտագրոհ՝ կենտրոնանալով բառային աշխատանքի վրա, ապա քննարկեցինք օտար լեզուներ սովորելուն խթանող միջոցների կարևորությունը՝ կենտրոնանալով անգլերենի կարևորության վրա: Ապա աշակերտներին տրված հինգ րոպեների ընթացքում նրանք լրացրեցին աղյուսակն ու փորձեցին հիմնավորել իրենց ընտրած կոնկրետ տարբերակները: Դասի հաջորդ փուլում մենք անցանք նոր նյութ բացատրել և հանձնարարելուն: Իսկ դասի մնացած մասն անց կացրեցինք բովանդակալից քննարկում կազմակերպելով, մասնավորապես քննարկեցինք հետևյալ հարցերը՝ ինչո՞ւ է անհրաժեշտ օտար լեզուներ իմանալը, ո՞րն է անգլերենի կարևորությունը, ի՞նչն է հետաքրքրում երեխաներին օտար լոզուներ սովորելիս, ի՞նչ թեմաների կցանկանային անդրադառնալ ուսումնական տարվա ընթացքում, ի՞նչն է նրանց արդեն ծանոթ, ի՞նչ սովորեցին տվյալ դասի ընթացքում, ի՞նչ կցանկանային իմանալ, ի՞նչ ոլորտներում է կարևոր անգլերենի իմացությունը և բազմաթիվ այլ հարցեր:

[9]Ուսուցմանարդյունավետհնարներ / Ս. Խաչատրյան.-Երևան.: ՖրիդրիխԷբերտհիմնադրամ, Հայաստան 2020.-էջ 42:

Դասի գրաֆիկական պատկերներն են հետևյալ տեսքը:





Ապա առաջարկեցի դասն ամփոփել լրացնելով հետևյալ աղյուսակը, որը ամփոփում է դասի ընթացքում քննարկված հարցերի արդյունքները, միաժամանակ աշակերտներին առավել տեսանելի կերպով է ներկայացնում անգլերենի կարևորությունը, նրանց ստիպում մտածել սեփական պատասխանները նշելուց առաջ, նաև մոտիվացնում է՝ նպաստելով լեզվի առավել լավ յուրացմանը:

Անգլերեն սովորելն անհրաժեշտ է, քանի որ……	Լիովին համաձայն եմ	Համաձայն եմ	չեզոք	Համաձայն չեմ	Լիովին դեմ եմ
1. մարդ կարող է ապրել ցանկացած երկրում, եթե գիտի անգլերեն					
2. անգլերենը միջազգային լեզու է					
3. եթե ցանկանում եք արտերկրում ապրել					
4. եթե ցանկանում եք արտերկրում սովորել					
5. …շատ երգեր են անգլերենով					
6. …շատ ֆիլմեր են անգլերենով					
7. թույլ է տալիս այլ երկրներում ապրող մարդկանց հետ շփվել					
8. այն կարող է անհրաժեշտ լինել աշխատելիս					
9. այն շատ կարևոր լրատվական լեզու է					
10. հնարավորություն կտա ճամփորդել ամբողջ աշխարհով					
11. անգլերենը գեղեցիկ լեզու է					

12. այն անհրաժեշտ կլինի համալսարանական կրթություն ստանալիս					
13. հնարավորություն է տալիս նոր տեխնոլոգիաներից օգտվել					
14. անգլերենն ամենուր է օգտագործվում					
15. եթե ցանկանում եք աշխատել արտերկրում					

Այսպիսով, ես կարող եմ վստահաբար փաստել իմ հետազոտության շրջանակներում գործածված հնարների բարձր արդյունավետության մասին և՝ երրորդ, և՝ իններորդ դասարաններում: Յուրաքանչյուր դասարանում կիրառելով տարիքին, ընդունակություններին համապատասխան և հետաքրքրությունների շրջանակն ընդգրկող հնարներ, ես կարողացա երրորդ դասարանի աշակերտների մոտ ոգևորություն առաջացնել, իրենց համար նոր համարվող առարկայի և լեզվի նկատմամբ, իսկ իններորդ դասարանում փորձեցի օգնել աշակերտներին հասկանալ դասավանդվող առարկայի կարևորությունը, նաև ավագ դասարաններ տեղափոխվելուց առաջ փոքր-ինչ կողմնորոշվել ապագա մասնագիտության ընտրության հարցում:

Ես փորձեցի բազմակողմանիորեն մոտենալ և բազմաշերտ ուսումնասիրություն անցկացնել, ինչն էլ լիովին ծառայեց ի շահ աշակերտներին և ինչ-որ չափով հասավ իր նպատակին: Ուստի, այսուհետ ես կաշարունակեմ բազմապիսի հնարների ուսումնասիրությունն ու կիրառությունը, դրանք դարձնել ամենօրյա դասերի անբաժան և բաղկացուցիչ մաս:

Աշխարհի լավագույն գրքերը, դասերն ու նյութերը աշակերտների համար գրավիչ չեն թվա ուսանելու և քրտնաջան աշխատելու գործում, եթե նրանք մոտիվացված չեն: Իհարկե, աշակերտներին մոտիվացնելու համար տարբեր միջոցներ են պետք կիրառել, և երբեմն դա բարդ է թվում նույնիսկ ամենափորձառու ուսուցիչներին: Եվ ահա, օգնության են հասնում սովորողներին խթանելու հնարները՝ իրենց գործածման բազմապիսի հնարավորություններով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Օտար լեզվի ուսուցման հիմնական նպատակը հաղորդակցության հմտությունների ձևավորումն է, իսկ մնացած բոլոր խնդիրները (կրթական, դաստիարակչական, զարգացնող) լուծվում են գլխավոր նպատակի իրականացման ճանապարհին:

Ուսուցչի խնդիրն է՝ յուրաքանչյուր աշակերտի համար ստեղծել այնպիսի միջավայր, օգտագործել այնպիսի մեթոդներ, որ յուրաքանչյուրին հնարավորություն կտա ցուցաբերել ակտիվություն և ստեղծագործական միտք:

Նոր մոտեցումները օտար լեզվի դասավանդման պրոցեսում, ինչպիսիք են ակտիվ ուսուցումը, ինտերակտիվ մեթոդները, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների օգտագործումը, համացանցը, օգնում են իրականացնել դասավանդման աշակերտակենտրոն մոտեցում, ապահովում են անհատական ուսուցում՝ ելնելով սովորողի հնարավորություններից, մակարդակից, հակումներից:

Աշակերտակենտրոն միջավայրում համագործակցող աշակերտները ձեռք են բերում ճանաչողական ակտիվություն: Օտար լեզվի ուսուցիչը պետք է լինի մեթոդապես գրագետ, ժամանակակից տեխնոլոգիաները ազատորեն տիրապետող և կիրառող:

Ես դասավանդման տարբեր հնարների մանրամասն ուսումնասիրությունից հետո կարող եմ ասել, որ ինչպես դասավանդման ավանդական, այնպես էլ ժամանակակից հնարներն ունեն իրենց դրական և բացասական կողմերը: Դասավանադման ընթացքում որպես հիմք են ծառայում ավանդական հնարները, և դասավանդողները չպետք է ամբողջությամբ անտեսեն դրանք՝ ներառելով նորերը: Այնուամենայնիվ, ուսուցման ժամանակակից հնարները հարմար են ընթացիկ դարին համընթաց քայլելու համար:

Ուսուցիչները պետք է կիրառեն տարբեր նորարարական մոտեցումներ ու գաղափարներ՝սովորողներին, հանձնարարվող նյութը առավել հասանելի կերպով բացատրելու համար: Նրանք պետք է գտնեն աշակերտներին դասավանդելու ամենահարմար ու ամենաարդյունավետ մոտեցումները:

Չէ՞ որ, ուսուցիչն այն անձնավորությունն է , որը չափազանց կարևոր դեր է խաղում աշակերտների կայացման և հաջողությունների հասնելու գործում:

Ուսուցման գործընթացում տարատեսակ հնարների կիրառումը շատ կարևոր է հատկապես մեր օրերում, քանի որ որոշումներ կայացնելու, խնդիրներ լուծելու

հմտություններն ու քննադատական, վերլուծողական մտածողությունների կարողությունները զարգացնելու գործում լավագույնս համապատասխանում և արդյունավետ կերպով աշխատում են դասավանդման բազմապիսի տեխնոլոգիաների օգտագործումը:

Իմ կատարած հետազոտության արդյունքի ամփոփված պատկերը ներկայացնում եմ կետևյալ դիագրամով՝



1. արդյունավետ էր 80%
2. մասմաբ էր արդյունավետ 19 %
3. արդյունավետ չէր 1%

Լսելով բազմաթիվ մասնագետների կարծիքներ և ինքս դասավանդելով՝ կարծում եմ, որ որքան էլ մեթոդները մշակվում, թրծվում, հղկվում, լրացվում և կատարելագործվում են ժամանակի և սերունդների հետ, որքան էլ իրենց տեսակի մեջ արդյունավետություն են գրանցում, միևնույն է, յուրաքանչյուր հմուտ մասնագետ ուսուցման ընթացքում կիրառելով որևէ մեթոդ, որոշ տարրեր, նրբություններ և մոտեցումներ «ներմուծում է» նաև այլ մեթոդներից և իր սեփական դասավանդման պրակտիկայից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Բաղդասարյան Հ. (2015), Հաղորդակցական մեթոդի դերը իսպաներենի՝ որպես օտար լեզվի դասավանդման խնդրում // «Օտար լեզուները բարձրագույն դպրոցում» Երևան, ԵՊՀ հրատ., N 1 (18):
2. Ուսուցման արդյունավետ հնարներ / Ս. Խաչատրյան.- Երևան.: Ֆրիդրիխ էբերտ հիմնադրամ, Հայաստան 2020.- էջ 42:
3. Bradford, J., 2008. Using Multisensory Teaching Methods. [online] UK: World of Dyslexia Ltd. Available at: http://www.dyslexia-parent.com/mag30.html [Accessed 2 February 2011]
4. Jardine, D.W., 2006. Piaget and Education. New York: Peter Lang Publishing
5. Marzano, R.J., 1992. A Different Kind of Classroom: Teaching with Dimensions of Learning. USA: Association for Supervision and Curriculum Development
6. Carrell, P.L., 1984. Schema Theory and ESL Reading: Classroom Implications and Applications. The Modern Language Journal. 68 (4), pp.332-343
7. Watkins, C., 2003. Learning a sense-maker's guide. [online] London: Associations of Teachers and Lecturers. Available at: http://www.new2teaching.org.uk/tzone/images/Learning_tcm7-26270.pdf [Accessed 6 February 2011]
8. Cheminais, R., 2008. Every Child Matters: A Practical Guide for Teaching Assistants. New York: Routledge
9. Grinder, M., 1991. Righting the Educational Conveyor Belt. USA: Metamorphous Press
10. Blaz D. Foreign Language Teacher's Guide to Active Learning. New York: Eyeon Education, 1999.
11. Cook G. Translation in Language Teaching. Oxford: Oxford University Press,2010.
12. Dorsch M. Second Language Acquisition vs. Second Language Learning.Germany: Grin Verlag, 2011.
13. Mukalel J.C. Approaches to English Language Teaching. New Delhi: DiscoveryPublishing House, 2005.
14. 5. Nagaraj G. English Language Teaching: Approaches, Methods, Techniques.India: Orient Blackswan, 1996.
15. O'Malley J.M., Chamot A.U. Learning Strategies in Second LanguageAcquisition. Cambridge: Cambridge University Press, 1990.

16. Richards J.C. Methodology in Language Teaching: An Anthology of CurrentPractice // Richards J.C., Renandya W.A. (eds.) Cambridge: CambridgeUniversity Press, 2002.
17. Siddiqui M.H. Techniques of Teaching Strategies. New Delhi: APH Publishing,2009.
18. Smith F. Comprehension and Learning: A Conceptual Framework for Teachers.Holt, Rinehart and Winston, 1975.
19. Weltman D. A Comparison of Traditional and Active Learning Methods:
20. Empirical Investigation Utilizing a Linear Mixed Model. Arlington: Universityof Texas, 2007.http://opencourses.uoa.gr/modules/document/file.php/ENL5/Instructional%20ackage/Presentations/PDFs/Unit2_Accessible.pdf/
21. https://www.fluentu.com/blog/educator-english/bilingual-method-of-teachingenglish/
22. https://aspu.am/website/images/old/upload/file/facultetner/kensab%20fac/ekologiayi_bnapahpanutyan_amb/Magistratura%20ekologia/11%20Mag.%20Cragir%20Dasavand.avand.ev%20jk-kic%20interakt.%20metod..pdf
23. https://library.fes.de/pdf-files/bueros/georgien/16023.pdf
24. https://americanenglish.state.gov/resources/activate-board-games
25. https://www.researchgate.net/publication/309963552_The_importance_of_using_games_in_EFL_classrooms
26. https://www.researchgate.net/publication/282536479_Games_in_the_Teaching_of_English
27. file:///C:/Users/hphhp/Downloads/Sochetra_Hang_thesis%20(4).pdf
28. http://www.worldscientificnews.com/wp-content/uploads/2015/06/WSN-7-2015-112-135.pdf
29. https://www.academia.edu/38218961/Improving_Students_speaking_proficiency_using_Games?email_work_card=view-paper
30. https://eduvoice.in/modern-teaching-methods/
31. https://funnyenglishforyou.wordpress.com/2014/09/15/2352/
32. https://www.studocu.com/in/document/aligarh-muslim-university/teacher-education/importance-of-teaching-techniques/21967604

Հավելված

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆ

«06» «սեպտեմբեր» 2022թ.

Առարկան՝ **անգլերեն**

Դասարանը՝ **9-րդ**

Ուսուցիչ՝ **Լուսինե Կարապետյան**

Դասի թեման՝ **Why To Know Foreign Languages?**

Դասի տիպը՝ **համակցված**

Դասի նպատակները.

ա/ ակադեմիական՝

- Հարստացնել բառապաշարը
- Ստացած նոր բառապաշարը գործածել քննարկման մեջ
- Սովորել արտահայտել մտքերը թեմայի վերաբերյալ
- Զարգացնել հաղորդակցման կարողությունը

բ/ սոցիալական՝

- Զարգացնել վերարտադրողական և ընկալողական կարողություններ
- Կարևորել օտար լեզվի կիրառությունը ապագա մասնագիտության ընտրության մեջ

Վերջնարդյունքներ. ***պետք է կարողանան***

- Կիրառել ստացած բառապաշարը քննարկման մեջ
- Հաղորդակցվել համադասարանցիների հետ ուսումնական պարապմունքի ընթացքում
- Ներկայացնել օտար լեզվի կարևորությունը սոցիալ-հասարակական միջավայրում
- Ազատ արտահայտել մտքերը թեմայի վերաբերյալ

Մեթոդներ՝ Խմբավորում, զրույց, խմբային աշխատանք, 5- րոպեանոց շարադրանք

Ձեռնական պարագաներ՝ գրատախտակ, դասագիրք, պաստառ, քարտեր՝ վարժություններով

Միջառարկայական կապ՝ հայոց լեզու,հասարակագիտություն

Դասի ընթացքը՝

Ներածություն. Մուտք, հաճախումներ, կահավորում, տեղաբաշխում

Խթանման փուլ

5 րոպանոց շարադրանք <<Օտար լեզուն իմ կյանքում>>

Իմաստավորում

- ✓ Անցած բառապաշարի վերհիշում
- ✓ Լրացնում են աղյուսակ հարցադրումներով
- ✓ Աշխատանք դասագրքով (ընթերցանություն, թարգմանություն) հարցերի և առաջադրանքների կատարում

Կշռադատում

Անդրադարձ-մեկ անգամ ևս լսում ենք հատվածներ ավելի լավ հասկանալու օտար խոսքը

Գնահատում

Միավորային և ձևավորող

Տնային աշխատանք

Գրել շարադրություն ’’ I want to know several foreign languages’’.